

«-----»

**սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
բաժնեմասի նվիրատվության պայմանագիր**

(Կազմված է 20-- թվականի -----ի ---ին և բաղկացած է 2 (երկու) էջից)

ք. -----

«---» -----ի 20-- թ.

«-----» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցման համարը՝ -----, գրանցման ամսաթիվը՝ ----- թ., ՀՎՀՀ-ն՝ -----) (այսուհետ՝ Ընկերություն) մասնակից -----ը (----- քաղաքացի, անձնագիր՝ -----, տրված՝ ----- թ., ---ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշը՝ -----, հաշվառման հասցեն՝ -----) (այսուհետ՝ Նվիրատու) մի կողմից և ----- քաղաքացի -----ը (անձնագիր՝ -----, տրված՝ ----- թ., ---ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշը՝ -----, հաշվառման հասցեն՝ -----) (այսուհետ՝ Նվիրառու) մյուս կողմից կնքեցին բաժնեմասի նվիրատվության հետևյալ պայմանագիրը:

1. Նվիրատուն Ընկերության կանոնադրական կապիտալում սեփականության իրավունքով իրեն պատկանող ---- % բաժնեմասը նվիրում է Նվիրառուին:
2. Բաժնեմասը Նվիրատուին է պատկանում իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի համաձայն:
3. Նվիրատուն հավաստիացնում է, որ վերը նշված բաժնեմասը վեճի առարկա չէ, գրավի, կալանքի և արգելանքի տակ չի գտնվում:
4. Նվիրառուն դառնում է Ընկերության կանոնադրական կապիտալում ---- % բաժնեմասի սեփականատեր՝ սույն պայմանագրի ստորագրման պահից: Նվիրառուին են փոխանցվում Ընկերության մասնակցի՝ մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքներն ու պարտականությունները: Նվիրառուն հավաստիացնում է, որ իրազեկ է Ընկերության ֆինանսական, գույքային վիճակին: Նվիրառուն իր վրա է վերցնում գնահատման տվյալների և հաշվեկշռային տվյալների անհամապատասխանության ռիսկը և պարտավորվում է Նվիրատուի նկատմամբ պահանջներ չներկայացնել:
5. Վեճերը և տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն պայմանագրի կատարման ընթացքում հնարավորության սահմաններում լուծվում են

բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում՝ դատական կարգով: Վեճերի լուծման կարգը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և պայմանագրով ծագած իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից: Սակայն սույն պայմանագրի կողմերն իրավունք չունեն բաժնեմասի սեփականատիրոջ փոփոխությունը հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում վկայակոչել այդ փոփոխության գրանցման բացակայությունը:

7. Բաժնեմասի նվիրատվության հետ կապված ծախսերն իր վրա է վերցնում Նվիրառուն: Նվիրառուին են հանձնարարվում նաև սույն պայմանագրից բխող փոփոխությունների պետական գրանցման հետ կապված գործառնությունների իրականացումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

8. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս օրինակից: Բոլոր օրինակներն ունեն միատեսակ իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրն ունի սույն պայմանագրի մեկական օրինակ, մեկ օրինակը հանձնվում է Ընկերությանը, մեկը՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Կողմերի ստորագրությունները

Նվիրառու՝

Նվիրառու՝

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)